ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 317-Ա

01 հունիսի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՎԵՏԻՔ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 29 ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-L որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. 2026 թվականի հունիսի 2-ից լուծել Ավետիք Սարգսյանի հետ 2026 թվականի մարտի 2-ին կնքված N 29 ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ավետիք Սարգսյանի համար վերջին աշխատանքային օր համարել 2026 թվականի հունիսի 2-ը:

01.06.2026

ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆ

Digitally signed by: BAZEYAN JANIK 2208850319

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Ջ. ԲԱԶԵՅԱՆ

ք. Գավառ